ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ: ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР. БИОЛОГИЧЕСКИЙ ЖУРНАЛ АРМЕНИИ

т. XXVII, № 3, 1974

ՀԱՄԱՌՈՏ ԳԻՏԱԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

УДК 595.752

Ս. Թ. ԱՎԴԱԼԲԵԳՅԱՆ

ՄԻ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ՝ ՈՐԴԱՆ ԿԱՐՄԻՐ ՆԵՐԿԻ ՄԱՍԻՆ

Միքայել Նալբանդյանը 1863 թվականի մայիսի 1-ին բանտից իր եղբորը՝ Ղազարոսին գրած մի նամակում խոսելով իր ընկերոջ՝ բժիշկ Անանիա Սուլթանշահի մասին, բնագիտական այլ հարցեր շոշափելու հետ մեկտեղ, խորհուրդ է տալիս Անանիային զբաղվելու նաև որդան կարմրի ուսումնասիրությամբ։ Ահա թե ինչ է գրում նա. «Անանիայի ուշադրությունն եմ հրավիրում «Coccinella» ընտանիքի միջատների ուսումնասիրության վրա, չնայած հայտնի է, որ այդ միջատները գտնվում են «կակտուսի» ընտանիքի բույսերի վրա, այնուհանդերձ որդան կարմիրը կա և բազմանում է Հայաստանում, Արաքսի հովտում։ Այդ միջատն առաջին անգամ հայտնաբերեց եպիսկոպոս-նկարիչ Սահակը սրանից 20—25 տարի առաջ, որի համար էլ ռուսական կառավարության կողմից արժանացավ ցմահ թոշակի։ Այդ եպիսկոպոսը մահացել է 50-ական թվականներին և նրանց (միջատների—Ս. Ա.) գաղտնիքը գերեզման տարել...» [5]։

Մատենադարանում, Մսեր Մսերյանի արխիվում պահպանված մի փաստաթղթում, գրված 1830 թվականին, որ վերնագրված է «Օրինակ կազմելոյ գկարմիր որդան կամ մեռուցման նորին», իբրև առաջաբան վերոհիշյալ Սահակ ծաղկարարը հետևյալն է ասում. «Կամելով իմ գտանել զկերպ յօրինման որդանն կարմրոյ՝ յանձն առի կրել զտաժանմունս ի պէս-պէս փորձառութեանս մեռուցման նորին և հանման իւղոյն՝ ըստ աւանդելոյ այլ և այլ անձանց սկսեալ ի 1815 ամէ փրկչական թուականին» [4]։

Ներկ ստանալու համար արված փորձերը երկու խմբի են բաժանվում. նախ՝ միջատի մեռցման և ապա՝ ներկի ստացման [6]։ Փորձերից պարզվում է, որ ներկի որակը մեծ չափով կախված է միջատի մեռցման եղանակից, որի համար նա անում է 10 փորձ՝ եռացնում բացախի և գինու մեջ, փռում, չորացնում, ազդում ծծմբի անհիդրիդով, վրան ցանում կրի և ալյուրի փոշի և այլն...։ Վերջապես կանգ է առնում կալաքարի (K_2CO_3) ջրում մեռցնելու վրա, որը անում է Եփրեմ կաթողիկոս Զորագյուղցու խորհրդով։ Միջատի մեռցման եղանակը որոշելուց հետո, անցնում է մյուս փուլին՝ ներկ ստանալուն, որի համար տալիս է երեք ձև.

1. Միջատը կալաքարի (պոտաշ) ջրում մեռցնելուց հետո, թողնել 24 ժամ սառը ջրի մեջ, ապա եռացնել շողանի (օճառախոտի Saponaria) ջրով, ավելացնել լութր (արենախոտ Lythrum), շիբ, ջուրը քամել, չորացնել։ Որդան կարմիր ներկի ստացման այս ձևին մենք հանդիպեցինք 1818 թվականին Էջմիածնում գրած՝ Մատենադարանի № 432 ձեռագրում ևս [3]։

2. Թմրած որդը (միջատը) դնել գինու մեջ, ստացված կարմրագույն հյութը քամել և շորացնել։ Այս եղանակով ստացված ներկն ըստ ծաղկարարի՝ ավելի գեղեցիկ ու պայծառափայլ է։

3. Միջատը ապակյա անոթում պահելուց հետո, եփել առաջին ձևով, օճառախոտի հետ, խառնելով արենախոտ և շիբ։

«Եւ այս է ահա՝ զոր ի գործ ածեմք ի կնիքս սրբազնասուրբ քահանայապետիս մերոյ և յայլ ամէն բազմատեսակ յերանգս նկարուց և ի ծաղկագիրս զանազան բոթուց (ընդգծումը մերն է —Ս. Ա.), օրէ յայնմանէ (ի 1816 թուականէն) մինչև յայսօր ի ժամանակի, ոչ կարոտացեալ յայնմհետէ այդքուդ գնոյն գնելոյ»,— գրում է նա։

Ներկի ստացումից հետո, Սահակ ծաղկարարը ձեռնարկում է միջատի հավաքման աշխատանքներին։ «Այս կենդանի ըստ պատմելոյ ոմանց գտանի յեղերս գետոյն Երասխայ սկսեալ ի Սարվանլար ասացեալ տաճկաբնակ կեղջէ (որ է բացատ յաթոռոյս իբր կիսոյ աւուր ճանապարհսն) մինչև զմուտս մերձակայ սահմանացն Նախճաւանայ»։

1822 թվականից սկսած ծաղկարարը իր առջև խնդիր է դնում անձամբ լինել տեղերում և հավաքել միջատը։ Նախ՝ գնում է Խոր-վիրապ ու հավաքում։ Այնուհետև ճշգրտելով տեղերը՝ կազմակերպում է միջատի մասսայական հավաք, ձեռքի տակ ունենալով 200 հոգի [1]։ Իր զեկուցագրի մեջ հայտնում է, որ հավաքել է 3 փութ (48 կգ) շոր որդան կարմիր։ Ինչպես միջատի հավաքման աշխատանքներին, նույնպես և միջատի կենսաբանության հետ կապված բոլոր հարցերին վերաբերող նյութերը նա գրի է առել իր հիշատակարանում, որը հրատարակված է մեր կողմից [2]։

Սահակ ծաղկարարի գործունեության հետ կապված հարուստ նյութերը պետք է հիմք դառնան ու նպաստեն որդան կարմրի հետագա ուսումնասիրությունների համար, որին ձեռնարկել է ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի կենդանաբանության ինստիտուտը։ Իսկ ներկի ստացման նրա առաջարկած ձևերը դրսևորում են նրան որպես քիմիկոսի, որը տքնաջան աշխատանքով պատմական որդան կարմրին հանեց մոռացությունից, դարձնելով արդիական։

Մ. Մաշտոցի անվան
Մատենադարան

Ստացված է 15.XI 1973 թ.

С. Т. АВДАЛБЕГЯН

ДОКУМЕНТ О ПОЛУЧЕНИИ КРАСКИ «ВОРДАН КАРМИР»

Резюме

В XIX веке сбором «Армянской кошенили» и приготовлении из нее красок занимался Саак Цахкарар (Саак епископ Тер-Григорян, миниатюрист). В архиве Матенадарана сохранился документ, где подробно списываются способы умерщвления насекомого (Porphyrophora Hamelii Brandt) и получения из него красок разных оттенков. Документ датирован 1830 годом и принадлежит тому же Сааку Цахкарару: краски он употреблял для рисунков, акварелей, печатей и для оформления важных бумаг. Приведем один способ получения краски, предложенный

Сааком Цахкараром. После умерщвления насекомых в растворе K_2CO_3 оставляют в воде 24 часа, затем кипятят в растворе мылнянки (Saponaria), прибавляют дербянника (Lythrum), квасцов, процеживают и высушивают.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ավդալբեգյան Ս. Թ. *Որդան կարմիրը և նրա տարածումը Արարատյան դաշտավայրում, «Տեղեկագիր» ՀՍՍՀ ԳԱ (բիոլոգ. գիտ.) 7, 1962։*
2. Ավդալբեգյան Ս. Թ. *Սահակ եպիսկոպոս Տեր-Գրիգորյանի հիշատակարանը, «Էջմիածին», 1963, Ա, Բ, Գ, Դ, 1964։*
3. Հարությունյան Ա. Խ. *Ներկերի և թանաքների գործածությունը հին հայկական ձեռագրերում. Երևան, 1941։*
4. *Մատենադարան, Մսեր Մսերյանի արխիվ, թղթ. 202, վավ. 461։*
5. Նալբանդյան Մ. *Երկերի լիակատար ժողովածու, Երևան, 4, 1949։*
6. *Казанджян Т. Т.* Очерки по истории химии в Армении, Ереван, 1955.